ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» _____ 2010թ. N _____Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*:

1. Անվանափոխել Երևանի մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների ֆիրմային անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Երևան քաղաքի ավագանու
«_____»_____2010թ.

N_____Ա որոշմամբ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Անվանափոխված կազմակերպության անվանումը
1.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Ժամանց» մշակութային կենտրոն ոչ առևտրային կազմակերպություն	«Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2.	ՀՀ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	«Երևանի «Մալաթիա» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
3.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Սեբաստիա» մշակութային կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	«Երևանի «Սեբաստիա» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
4.	Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Մալաթիա-Մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	«Երևանի «Մալաթիա» մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
5.	ՀՀ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	«Երևանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
6.	Մալաթիա – Սեբաստիա թաղային համայնքի «Կռունկ» փակ բաժնետիրական ընկերություն	«Կռունկ-Մալաթիա» փակ բաժնետիրական ընկերություն
7.	Երևանի քաղաքի Մալաթիա – Սեբաստիա թաղային համայնքի «Վերելակ» փակ բաժնետիրական ընկերություն	«Անխափան վերելակ» փակ բաժնետիրական ընկերություն
8.	«Նոր Նորք համայնքի համատիրությունների աշխատանքները համակարգող» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	«Նոր Նորքի համատիրությունները համակարգող» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
9.	Նուբարաշեն թաղային համայնքի «Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերություն	«Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերություն
10.	Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Սան-մաքրում» փակ բաժնետիրական ընկերություն	« Քանաքեռ-Զեյթուն Սան-մաքրում» փակ բաժնետիրական ընկերություն
11.	Արաբկիր համայնքի «Նոր Արաբկիր» փակ բաժնետիրական ընկերություն	Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերություն

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Երևանի թաղային համայնքները վերակազմակերպվել են Երևան համայնքի, իսկ նույն օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի թաղային համայնքների սեփականությունը համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևանին և Երևանը համարվում է Երևան քաղաքի թաղային համայնքների իրավահաջորդը:

Երևան քաղաքի նախկին թաղային համայնքների կողմից հիմնադրված մի շարք կազմակերպությունների ֆիրմային անվանումներում օգտագործվել է <<համայնք>> բառը, որը չի բխում գործող օրենսդրության պահանջներից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, 53-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը անհրաժեշտություն է առաջացել անվանափոխել Երևան համայնքի մի շարք առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան համայնքի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպություններն անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին» N604-Ն 1-ին 3-րդ հոդվածի համաձայն Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի շարք առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասը սեփականության իրավունքով փոխանցվել են Երևան քաղաքին: Փոխանցված մի շարք կազմակերպություններ կրում են <<Երևանի քաղաքապետարանի պետական փակ բաժնետիրական ընկերություն>> ֆիրմային անվանումը, որը չի համապատասխանում գործող օրենսդրության պահանջներին, մասնավորապես՝ <<Երևանի քաղաքապետարան պետական կառավարչական հիմնարկի>> գործունեությունը դադարեցվել է, իսկ ՓԲԸ-ներն այլևս պետական չեն: Բացի այդ, ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման և նշված ընկերությունների պետական ռեգիստրի վկայականների միջև առկա են անվանումների հակասություններ: Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը՝ անհրաժեշտություն է առաջացել անվանափոխել Երևան համայնքի մի շարք առևտրային կազմակերպությունները:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ